ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 741-Ա «07» 06 2024 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ «ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ «ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի № 1997-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «ժ.3» կետերը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ըստ անվանակարգի «Սպորտի ոլորտում տարվա լավագույնների ընտրություն» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելված № 1-ի,

2) Հայաստանի Հանրապետության ըստ անվանակարգի «Սպորտի ոլորտում տարվա լավագույնների ընտրություն» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարությունում լրատվամիջոցների հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելված № 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության «Տարվա տաս լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգը, «Հայաստանի Հանրապետության «Տարվա տաս լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության տարվա 20 լավագույն թեկնածու մարզիկների որոշման չափորոշիչների սանդղակը, «Հայաստանի Հանրապետության «Տարվա տաս լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում լրատվամիջոցների հավատարմագրման կարգը և «Հայաստանի Հանրապետության «Տարվա տաս լավագույն մարզիկներ» 2021 թվականի մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնող հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 17-ի № 143-Ա/1 և 2017 թվականի նոյեմբերի 21-ի № 173-Ա/1 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 1997-Ա հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Восстановимая подпись

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Подписано: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի հունիսի 7-ի_____
№ 741-Ա_____ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ «ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ըստ անվանակարգի «Սպորտի ոլորտում տարվա լավագույնների ընտրություն» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:

2. Մրցույթը անցկացվում է յուրաքանչյուր տարի՝ սույն կանոնակարգով սահմանված պայմաններով և կարգով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Մրցույթի նպատակներն են՝

1) խրախուսել և մեծարել (օլիմպիական և ՄՕԿ-ի կողմից ճանաչված ոչ օլիմպիական մարզաձևերից, ինչպես նաև պարալիմպիկ, սուրդլիմպիկ) ընթացիկ տարում նվաճումներ կամ նշանակալի հաջողություններ գրանցած, ինչպես նաև իրենց մրցելույթներով Հայաստանի Հանրապետության ճանաչելիության և հեղինակության բարձրացմանը, հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանը նպաստած հայ մարզիկներին և մարզիչներին,

2) սպորտի միջոցով խթանել Հայաստան-սփյուռք մարզական համագործակցության կապերի ամրապնդումը և զարգացումը,

3) խրախուսել սպորտի զարգացմանը և մասսայականացմանը:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

5. Մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում ընդգրկվում են Նախարարության, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության և մարզական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը ձևավորվում է մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 10-ը:

6. Մրցույթի հաղթողները որոշվում են Նախարարության կողմից հավատարմագրված մարզական լրագրողների (այսուհետ՝ Լրագրողներ) քվեարկության արդյունքների համադրմամբ:

7. Մրցույթի քվեարկությանը լրագրողների մասնակցությունը ապահովելու նպատակով՝ Նախարարությունը (ընթացիկ տարվա մինչև դեկտեմբերի 15-ը) կազմակերպում է լրագրողների հավատարմագրում:

8. Հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող լրատվամիջոցներում աշխատող կամ նրանց հետ համագործակցող այն մարզական լրագրողները, ովքեր տվյալ տարում ունեն մարզական իրադարձային կամ վերլուծական հրապարակում:

9. Մրցույթի բուն անցկացման աշխատանքները իրականացնում է գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով գնումների մրցույթը հաղթած կազմակերպությունը:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

10. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված մարզիկները և մարզիչները:

11. Մրցույթի մասնակիցների առաջադրումը որոշվում է հետևյալ ընթացակարգով.

1) Մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 18-ը ներառյալ Նախարարությունը Հանձնաժողովին է ներկայացնում (օլիմպիական և ՄՕԿ-ի կողմից ճանաչված ոչ օլիմպիական մարզաձևերից, ինչպես նաև պարալիմպիկ, սուրդլիմպիկ) Մրցույթի մասնակից մարզիկների և մարզիչների անվանացանկերը, որոնք ընթացիկ տարում ունեցել են նշանակալի մարզական հաջողություններ և նվաճումներ՝ օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի մեծահասակների և երիտասարդների առաջնություններում, եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում և համաշխարհային ունիվերսիադայում, ՄՕԿ-ի կողմից ճանաչված ոչ օլիմպիական մարզաձևերից՝ աշխարհի և Եվրոպայի մեծահասակների և երիտասարդների առաջնություններում, գրավել են մրցանակային տեղեր, խաղային մարզաձևերում ցուցաբերել են թիմային հաջողություններ: Անվանացանկերում ընդգրկված են Հայաստանի Հանրապետությունը լավագույնս հանրահռչակած մարզիկները, որոնք իրենց մրցելույթներով Հայաստանն ու հայ ժողովրդին ավելի ճանաչելի են դարձրել, նպաստել են Հայաստանի Հանրապետության հանրահռչակմանը և Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Անվանացանկերում ընդգրկված են մարզիչները՝ (գլխավոր, ավագ, երկրորդ և անձնական), լավագույն մարզիչ ընտրելու համար, որոնց սաները տվյալ տարում ունեցել են առավելագույն նշանակալի մարզական հաջողություններ և նվաճումներ: Հանձնաժողովին ներկայացված անվանացանկերը պետք է պարունակեն առաջադրվող թեկնածուների լրիվ ցուցակը և համապատասխանեն լավագույնների ընտրության հետևյալ անվանակարգերին՝

ա. լավագույն 3 մարզիկներ,

բ. լավագույն կին մարզիկ,

գ. հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ,

դ. լավագույն թիմ (խաղային մարզաձևեր և շախմատ),

ե. լավագույն երիտասարդ մարզիկ,

զ. վերադարձ մեծ սպորտ և/կամ հայտնություն,

է. Հայաստանի Հանրապետությունը լավագույնս հանրահռչակած մարզիկ,

ը. լավագույն մարզիչ,

թ. հանդիսատեսի համակրանք (առցանց քվեարկությամբ):

2) Ըստ յուրաքանչյուր անվանակարգի Նախարարությունը պետք է ներկայացնի Հանձնաժողովին մեկ անվանացանկ:

3) Մրցույթի մասնակիցների անվանացանկերը (սույն կանոնակարգի 11-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներին համապատասխան) ստանալուց հետո Հանձնաժողովը ստուգում է անվանացանկերում ընդգրկված անձանց համապատասխանությունը տվյալ անվանակարգերին:

4) Հանձնաժողովը ստուգված անվանացանկերը տրամադրում է Նախարարությանը մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 19-ը ներառյալ:

5) Նախարարությունը իր պաշտոնական կայքում՝ www.escs.am մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ հրապարակում է Մրցույթի մասին հայտարարությունը, Հանձնաժողովի կողմից ստուգված անվանացանկերը, միաժամանակ հրապարակվում է հակիրճ տեղեկատվություն՝ մարզիկների և մարզիչների տվյալ տարվա ընթացքում ցուցաբերած մարզական նվաճումների, նրանց հանրաճանաչության և իրականացրած մարզական գործունեության վերաբերյալ:

6) Սույն կետի 1-ինից 5-րդ ենթակետերում սահմանված կարգով առաջադրված թեկնածությունները միասին կազմում են մրցույթի անվանակարգը:

7) Հայտարարությունը կայքէջում տեղադրելուն պես սկսվում է առցանց քվեարկությունը «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգի համար:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

12. Լրագրողները քվեարկությունը իրականացնում են փակ քվեարկությամբ՝ Մրցույթի մասնակից մարզիկների անվանակարգի քվեաթերթիկներում համապատասխան սյունակում կատարում են նշում նախընտրած մարզիկի անվան դիմաց:

13. Լրագրողների քվեարկությունն ավարտվում է քվեարկության համար սահմանված համապատասխան օրվա ժամը 11.00-ից մինչև 13.00-ն, իսկ առցանց քվեարկությունը ավարտվում է քվեարկության համապատասխան օրվա մինչև ժամը 17:00-ն ներառյալ: Քվեարկության համար սահմանված ժամկետի ավարտից հետո Հանձնաժողովն ամփոփում է մրցույթի արդյունքները: Առանձին-առանձին ամփոփման համար կազմվում է մարզիկների անվանակարգերի սանդղակ: Մարզիկների անվանակարգի սանդղակում ձայների ընդհանուր քանակը տվյալ մարզիկի միավորն է: Մարզիկի ցուցանիշը որոշվում է հետևյալ ձևով.

1) Յուրաքանչյուր անվանակարգում քվեարկողի կողմից ընտրած մեկ մարզիկի դիմաց կատարված «V»-ձև նշանը, որպես 1 միավոր քվեարկության արդյունքում հաշվարկվում է տվյալ մարզիկի ստացած ձայների քանակին, բացառությամբ 11-րդ կետի 1-ին ենթակետի «թ.» պարբերությունը, որը իրականացվելու է առցանց քվեարկության ձևաչափով, յուրաքանչյուր օգտատեր կարող է քվեարկել միայն մեկ անգամ.

2) եթե նույն քվեաթերթիկում ձայնը տրված է մեկից ավելի անձի օգտին, քվեաթերթիկը համարվում է անվավեր, բացառությամբ 11-րդ կետի 1-ին ենթակետի «ա.» պարբերության (լավագույն 3 մարզիկներ) անվանակարգի, որտեղ պետք է նշում կատարվի երեք անձի դիմաց.

3) վերջնական ամենաբարձր միավոր ունեցող մարզիկը տվյալ անվանակարգում ճանաչվում է մրցույթի հաղթող՝ բացառությամբ 11-րդ կետի 1-ին ենթակետի «ա.» պարբերության (լավագույն 3 մարզիկներ): Յուրաքանչյուր մարզիկ կարող է հաղթող ճանաչվել միայն մեկ անվանակարգում, հավասար միավորների դեպքում դրամական մրցանակը բաժանվում է մարզիկների միջև հավասարապես: Մրցույթի հաղթողների անվանացանկը Նախարարության կողմից հրապարակվում է հանդիսավոր արարողության ժամանակ:

14. Հանձնաժողովի կողմից կայացված որոշումները պարտադիր են Մրցույթին մասնակցող Լրագրողների և մարզաձևերի ֆեդերացիաների համար:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Մրցույթի յուրաքանչյուր անվանակարգում հաղթողը պարգևատրվում է դրամական մրցանակով և հավաստագրով, իսկ «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգի հաղթողը՝ հուշանվերով և հավաստագրով:

VII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Մրցույթի անցկացման ընթացակարգի վերաբերյալ վեճերը (բողոքները, տարաձայնությունները) լուծվում են Հանձնաժողովի նիստում, որին բողոքատուի կամ նրա ներկայացուցչի ներկայությունը պարտադիր է: Վեճի (բողոքների, տարաձայնությունների) քննարկման արդյունքում Հանձնաժողովի կայացրած որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2024 թվականի __հունիսի 7-ի_____
№ 741-Ա _____ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՍՏ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ «ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ըստ անվանակարգի «Սպորտի ոլորտում տարվա լավագույնների ընտրություն» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) մարզական խմբագրություն (լրագրողներ) ունեցող լրատվամիջոցների հավատարմագրման կանոնները:

2. Լրատվամիջոցների հավատարմագրումն իրականացվում է սույն կարգին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի նոյեմբեր ամսին՝ տվյալ տարվա Մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար: Հավատարմագրման ժամկետն է՝ հավատարմագրման օրվանից մինչև Մրցույթի քվեարկության համար սահմանված ժամանակահատվածի վերջին օրը՝ քվեարկության ավարտը:

3. Մրցույթի քվեարկության համար կարող են հավատարմագրվել այն լրատվամիջոցները (հեռուստաընկերություն, տպագիր մամուլ, էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոց), որոնք՝

1) հայկական սպորտը լուսաբանող առնվազն շաբաթական պարբերականությամբ վերլուծական ծրագիր/հաղորդում ունեցող, լուրերի բլոկում հայկական սպորտը լուսաբանող առանձին ծրագիր ունեցող հեռուստաընկերություն են,

2) հայկական սպորտը լուսաբանող առնվազն 3000 տպաքանակով տպագիր լրատվամիջոց են,

3) հայկական սպորտը լուսաբանող էլեկտրոնային լրատվամիջոց են:

4. Հավատարմագրվելու համար լրատվամիջոցները պետք է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 13-ը համապատասխան դիմում ներկայացնեն Նախարարություն՝

Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն՝ հաստատված լրատվամիջոցի ղեկավարի կողմից՝ նշելով իրենց լրատվամիջոցի բոլոր լրագրողների կարծիքը ներկայացնող լրագրողի ըստ անձնագրի ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում) և բնակության հասցեն, լրատվական գործունեություն իրականացնողի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը:

5. Մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար լրատվամիջոցների հավատարմագրման համար վարվում է առանձին հավատարմագրման մատյան:

6. Նախարարությունը սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո այն անմիջապես գրանցում է հավատարմագրման մատյանում, որտեղ նշվում են դրա ստացման օրը և սույն կարգի 4-րդ կետով նախատեսված՝ դիմումում մատնանշված տեղեկությունները: 5-օրյա ժամկետում լրատվամիջոցին հավատարմագրելու կամ նրա հավատարմագրումը մերժելու մասին գրառում է կատարվում լրատվամիջոցների հավատարմագրման մատյանում, և դրա մասին տեղեկացվում է լրատվամիջոցը: Հավատարմագրման մատյանում նշվում են նաև հավատարմագրման վերջնաժամկետը, հավատարմագրման դադարեցման մասին նշումը, հավատարմագրման դադարեցման հիմնավորումը (համառոտ) և այլ տեղեկություններ:

7. Լրատվամիջոցի հավատարմագրումը մերժվում է, եթե սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումը չի բովանդակում կարգով սահմանված տեղեկությունները, կամ առկա է լրատվամիջոցի հավատարմագրումը դադարեցնելու՝ սույն կարգի 11-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը:

8. Հավատարմագրված լրատվամիջոցների լրագրողների ցուցակը հանձնվում է Նախարարության անցագրային կետ(եր): Ցուցակում փոփոխությունները և լրացումները կատարվում են լրատվամիջոցների հավատարմագրման մատյանում կատարված գրառումներին համապատասխան՝ այդ գրառումները կատարվելուց անմիջապես հետո:

9. Հավատարմագրված լրատվամիջոցների գործունեությունը կանոնակարգվում է սույն հրամանի հավելված № 1-ով սահմանված կանոնակարգով:

10. Հավատարմագրված բոլոր լրատվամիջոցները տեղեկացվում են Մրցույթի քվեարկության ժամանակահատվածի և կոնկրետ իրենց քվեարկության օրվա և ժամի մասին: Տեղեկատվությունը լրատվամիջոցին փոխանցելու պատշաճ ձև է համարվում էլեկտրոնային փոստով հաղորդումը: Լրատվամիջոցի էլեկտրոնային հասցեի բացակայության դեպքում տեղեկատվությունը փոխանցվում է այլ միջոցներով:

11. Նախարարությունը լրատվամիջոցի հավատարմագրումը կարող է դադարեցնել, եթե՝

1) լրատվամիջոցը դադարել է գործել.
2) լրատվամիջոցը տարածել է Նախարարության և Մրցույթի մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանել իրականությանը, ինչը հաստատվել է փաստերով.
3) հավատարմագրումը դադարեցնելու մասին դիմել է լրատվամիջոցը:

12. Լրատվամիջոցի հավատարմագրման դադարեցումն իրականացվում է լրատվամիջոցի հավատարմագրման մատյանում համապատասխան գրառում կատարելու միջոցով: Լրատվամիջոցի հավատարմագրման դադարեցման մասին մեկօրյա ժամկետում հայտնվում է լրատվամիջոցին:

13. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվամիջոցի հավատարմագրման համար նախատեսված դիմումին կից պետք է ներկայացվի նաև Հայաստանի Հանրապետությունում լրատվամիջոցի հավատարմագրման՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված վկայականի լուսապատճենը՝ բնօրինակի հետ միասին:
14. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվամիջոցի հավատարմագրման դադարեցման հիմք է համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում նրա հավատարմագրման դադարեցումը:
15. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվամիջոցի հավատարմագրման համար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման վկայականը չի պահանջվում, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով գործում է տվյալ լրատվամիջոցի առանձնացված ստորաբաժանումը: